# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ

### ՅՈՐԳ ԲԱԲԵՐՈՎՍԿԻ

XX դարը կարգերի և իրագործելիության պատրանքի փուլ էր: «Արդիականությունը պետք է պատկերացնել իբրև մի ժամանակաշրջան», – այսպես է գրում լեհ ծագումով բրիտանացի սոցիոլոգ Զիգմունդ Բաումանը: Նա կարգը գիտակցաբար ընկալել է իբրև կյանքի պայմանաձև: Աշխարհը դեռ ընդամենը կամք է ու պատկերացում, և այդ պատճառով այն կարող է ցանկացած ձևով կարգավորվել կամ փոփոխվել: Շրջապատող աշխարհին ըմբռնելով որպես մարտահրավեր և փորձելով ենթարկեցնել իրենց կամքին՝ մարդիկ իրենց գիտակցում են որպես սեփական ճակատագիրը կերտողներ: Նրանք հիմա գիտեն, որ հնարավոր է ցանկացած կարգ, եթե այդպիսին երբևէ մտածվել է, և եթե կան գործիքներ, որոնցով այն կարելի է աշխարհ տեղափոխել: Կարգի հայտնագործումը հետամնացության ծննդի ժամն է: Միայն դա է ընդհանրապես ծնում այն ամբիվալենտությունը, որի հաղթահարողը ինքը պետք է լինի: Պատկերացնենք, առաջարկում է Բաումանը, թե ժամանակակից պետությունը պարտիզպան է, որը կարգ ու գեղեցկություն է ստեղծում և հեռացնում մոլախոտը՝ այլախոհությունը, հերձվածողականությունը, հետամնացությունը և օտարը: Հոգու ճարտարագետները լավատես են եղել: Նրանք հավատացել են առաջընթացին ու դաստիարակությանը: Չի եղել որևէ սոցիալական հիմնախնդիր, որն իրենք չկարողանային վերջնականապես լուծել ռացիոնալ պլանավորմամբ: Պարտիզպան պետությունն ուտոպիայի արձագանքի հողն էր: Դա իրագործեց այն, ինչ հղացել էին նացիոնալիստները, ռասիստներն ու կոմունիստները[1]:

Բոլշևիկները նվաճողներ էին. նրանք իրենց ենթարկեցին կայսրությունը, որպեսզի այն կարգավորեն, տարակարգեն և փոփոխեն: Բայց նրանք նաև իմպրովիզացիայի և ճգնաժամի վարպետներ էին: Չկար որևէ հիմնախնդիր, որը նրանք չկարողանային իսկույն լուծել: Ճգնաժամը բոլշևիզմի կենսաձևն էր, այն հիմքը, որի վրա բարգավաճեցին բռնություն կիրառող ինտերվենցիոն պետությունը և կոփելու մշա-

[1] Տե՛ս **Bauman Z.,** Moderne und Ambivalenz. Das Ende der Eindeutigkeit. Frankfurt am Main, 1995, էջ 45-46, **Scott J.,** Seeing Like a State. How Certain Schemes to Improve the Human Condition Have Failed. New Haven/CT 1998, էջ 1-8:

կույթը[2]: Ինչու բոլշևիկները պիտի լսեին ուղղափառ մարքսիստներին և սպասեին պատմության կանչին, եթե կարող էին անհապաղ իրականացնել իրենց մտադրությունը: Դրա համար են իրենցով հիացել համայն աշխարհում, որտեղ սոցիալական տեխնիկները երազել են նոր հասարակարգի մասին: Բոլշևիկները փոխել են անփոխարինելին. նրանք կործանել են բուրժուական փտող կարգը և փոխարենը ներդրել անառարկելի կամքն առ իշխանություն՝ մարդկությունը քայքայումից փրկելու համար: Գործարաններում կուսակցական բջիջները «կարգապահություն հաստատելու խմբակցություններ են», գրում է տնտեսական ոլորտի լրագրող Ալֆոնս Գոլդշմիդթը, ով 1920 թվականին այցելել էր Մոսկվա: «Դրանք կոչված են ներծծելու, կլանելու և ոչնչացնելու վատ հյութերը»: Նույն ժամանակ Մոսկվա այցելած գրող Ֆրանց Յունգն այնտեղ գտել էր այն, ինչն իրեն պակասում էր իր հայրենիքում՝ «հավասարության ձգտող կամք և կոլեկտիվ ընկերներ»: Մինչ այդ ինքը երբեք այդպիսի երջանկություն չի զգացել: «Դա այն էր, ինչ ես փնտրել էի և ուր մանկուց ի վեր ճամփա էի ընկել՝ հայրենիքը, մարդկության հայրենիքը»[3]: Բոլշևիկյան համակարգը մեքենա է: «Ասես հսկայական ճանկերով այն բռնում է մարդկանց ու հումքը, ստիպում մարդկանց աշխատել… Եվ այն մեխանիկորեն կճզմի ընդդիմացողներին»[4]:

Նաև տասը տարի հետո ստալինյան հեղափոխության բարձրակետին Խորհրդային Միություն են եկել եվրոպացիներ և ամերիկացիներ՝ տեսնելու, թե ինչպես է ստեղծվել նոր կարգը: Հին աշխարհում տիրում էին դեպրեսիան ու գործազրկությունը, դեկադենտությունն ու փտածությունը, իսկ նոր աշխարհում՝ զարթոնքի պաթոսը: Կառլ Շմիթը, Էռնսթ Յունգերը, Հ. Ջ. Ուելսը, Բեաթրիսա և Սիդնեյ Վեբ ամուսինները, Լիոն Ֆոյխթվանգերը, Ջոն Մեյնարդ Քեյնսը, Ջորջ Բեռնարդ Շոուն, նրանք բոլորը տարբեր պատճառներով տրվեցին իրագործելիության բոլշևիկյան կրոնի դյութանքին, հիացան բանականության իշխանությամբ և այն անողոքությամբ, որով խորհրդային տիրակալները մարդկությունն ազատում էին շահույթի անեծքից և շուկայի անարխիայից: Զանգվածը չէր աղոթում: Այն երգում էր ինտերնացիոնալը[5]: Թե ինչ ար-

---

[2] Տե՛ս **Schlögel K.,** Utopie als Notstandsdenken – einige Überlegungen zur Diskussion über Utopie und Sowjetkommunismus, in: W. Hardtwig (Hg.), Utopie und politische Herrschaft im Europa der Zwischenkriegszeit. München, 2003, էջ 94-95, **Kindler R.,** Stalins Nomaden. Herrschaft und Hunger in Kasachstan. Hamburg, 2014, էջ 145:

[3] **Koenen G.**, Der Rußland-Komplex. Die Deutschen und der Osten 1900-1945. München, 2005, S. 302-307.

[4] Նույն տեղում, էջ 306:

[5] Տե՛ս **Furet F.,** Das Ende der Illusion. Der Kommunismus im 20. Jahrhundert. München, 1996, էջ 197-208, **Bracher K.-D.,** Zeit der Ideologien. Eine Geschichte des politischen Denkens im 20. Jahrhundert. München, 1985, էջ 222-238, **Rohrwasser M.**, Der Kommunismus. Verführung, Massenwirksamkeit, Entzauberung, in: H. Maier (Hg.), Wege in die Gewalt. Die modernen politischen Religionen. Frankfurt am Main, 2000, էջ 121-142, **Kiesel H.**, Ernst Jünger. Die Biographie. München 2009, էջ 392-407, **Ryklin M.,** Kommunismus als Religion. Die Intellektuellen

ժեր այդ փորձարարությունը, այդ մասին գրեթե ոչ ոք չէր ուզում խոսել ո՛չ Խորհրդային Միությունում, ո՛չ էլ Եվրոպայում:

Խորհրդային Միությունն այն փորձադաշտն էր, որտեղ միլիոնների կյանքը նորովի կազմակերպվեց: Մարդիկ տարբաժանվեցին սոցիալական դասակարգերի և դասային աստիճանների: Այժմ կային բանվորներ ու գյուղացիներ, կուլակներ ու բուրժուաներ, կոմունիստներ ու անկուսակցականներ, և այդ վերագրումից էր կախված, թե ինչ իրավունքներից կարելի է օգտվել: Նոր կարգը պետք է լիներ հստակ ու տեսանելի, թշնամիներն ու կողմնակիցները՝ ճանաչելի: Բոլշևիկներն իրենց հպատակներին բաժանեցին օգտակար և արժեզուրկ մարդկանց խմբերի, սոցիալական կարգավիճակին կցեցին արտոնություններ և ստիպեցին յուրաքանչյուրին կողմնորոշվել նոր կարգում: Ոչ ոք չէր կարող խուսափել այդ դասակարգումից, քանզի գոյատևելը պարզապես կախված էր սոցիալական կարգավիճակից: Իշխանավորները կարողացան սոցիալական հիերարխիայի այդ համակարգում գտնել բարեկամներ և բացահայտել թշնամիներին[6]:

Նոր կարգի մեջ էր մտնում նաև կայսրության էթնիկական խմբերի սահմանազծումը: Կենտրոնից ծայրամասերի ուղղությամբ սոցիալիստական պետության ձևավորման նախագիծը կարող էր հաջողություն ունենալ միայն հպատակների լեզվում ու մշակույթում: Ընդհանրապես, միայն կայսրության ինդիգենիզացումն ու էթնիկականացումը ռեժիմի համար պետությունը դարձրին գյուղ տեղափոխելու, բնակչությունը կատեգորիզացնելու և մոբիլիզացնելու միջոց: Այդ պատճառով իշխանավորները Խորհրդային Միությունը կազմակերպեցին էթնիկական պատկանելության սկզբունքով: Ցարական բազմազգ կայսրությունից ստեղծվեց ազգերի իմպերիա՝ սահմաններով, մայրաքաղաքներով, պաշտոնական լեզուներով և ազգային առասպելներով: Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական. այսպես է անվանել Ստալինը ազգայնացման նախագիծը: Նախագիծը գյուղացիներին վերածեց ռուսների, հրեաների, ուկրաինացիների, և դա ազգային դեմք էր տալիս սոցիալիզմին: Մարքսիստները դարձել էին ազգեր ստեղծողներ, իսկ բազմազգ պետությունը փոխակերպվել էր ազգերի կայսրության[7]:

---

und die Oktoberrevolution. Frankfurt am Main, 2008, էջ 90, **Mazower M.,** Der dunkle Kontinent. Europa im 20. Jahrhundert. Berlin, 2000, էջ 186-187, **Priestland D.,** Weltgeschichte des Kommunismus. Von der französischen Revolution bis heute. München, 2009, էջ 246-250, **Raphael L.,** Imperiale Gewalt und mobilisierte Nation. Europa 1914-1945. München, 2011, էջ 190: Գերմանացի կոմունիստ Ռութ Ֆիշերը այսպես նկարագրեց. «Գերմանիայում պահպանողական հեղափոխության կողմնակիցները հիացած էին խորհրդային փորձով» (**Fischer R.,** Stalin und der deutsche Kommunismus, Bd. 1, Berlin 1991, S. 355):

[6] Տե՛ս **Fitzpatrick S.,** Ascribing Class. The Construction of Social Identity in Soviet Russia, in: Journal of Modern History 65 (1993), էջ 745-770, **Alexopoulos G.**, Stalin's Outcasts. Aliens, Citizens and the Soviet State, 1926-1936. Ithaca/N.Y., 2003, էջ 13-44:

[7] Տե՛ս **Baberowski J.,** Stalinismus und Nation. Die Sowjetunion als Vielvölkerreich 1917-

Այդուհանդերձ, պետության ձևավորումը ոչ թե ավարտն էր, այլ այն շրջադարձի սկիզբը, որը Խորհրդային Միությունը պետք է վերածեր ժամանակակից արդյունաբերական պետության: Խորհրդային Միությունն այն չէր, ինչ պետք է դառնար: Նրա առաջնորդները ներկայացնում էին պահանջներ, բայց չէին կարողանում դրանք իրականացնել, որովհետև չունեին մարդկային կապիտալ, գործիքներ ու հնարավորություններ: Առանց վարկերի, արտասահմանյան տեխնոլոգիաների և օգնության Խորհրդային Միությունը կմնար այն, ինչ էր: Այդ պատճառով Ստալինն ու իր համախոհները արդյունաբերականացման ֆինանսավորման այլ հնարավորություն չէին տեսնում, քան հացահատիկի արտահանումը: Միայն թե չէին կարողանում ստանալ, ինչ ցանկանում էին, քանի որ գյուղացիներին շահագրգռող քիչ խթաններ կային՝ իրենց աշխատանքի արդյունքը պետությանը տալու: Առանց հարկադրանքի իրենք չէին կարողանա ելք գտնել, առանց գյուղատնտեսության կոլեկտիվացման ու գյուղացիների հպատակեցման անզոր կմնային: Դրանում գոնե Ստալինը և իշխանության օղակներում գտնվող նրա կողմնակիցները ոչ մի կասկած չունեին: Երբ այդ բռնակալը հացահատիկի հայթայթումը վերահսկելու և կուսակցական ընկերներին մեծ թռիչքի տրամադրելու նպատակով 1928 թվականին մեկնում է Սիբիր, նվաստացուցիչ կերպով բախվում է իրականությանը: Երբ ժամանում է Բառնաուլ, նրան բացատրում են, որ մարզում չկա ո՛չ մեքենա, և ո՛չ էլ ճանապարհ[8]: Մենք չգիտենք, թե Ստալինն ինչպիսի զգացումներ է ունեցել, երբ իրեն՝ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդին և ժողովուրդների հորը, սահնակով տարել են ձյան միջով: Բայց մենք գիտենք, որ նա վճռել է արմատախիլ անել հետամնացությունը: Այլևս երբեք, հայտարարել է Ստալինը, Ռուսաստանը չպետք է նվաստացվի արևմտյան տերությունների կողմից: Այն, ինչը այլ ազգերը արել են հարյուրամյակների ընթացքում, Խորհրդային Միությունը պետք է դրան հասնի մի քանի տարում: Կա՛մ մենք կհաղթենք, կա՛մ մեզ կճզմեն[9]:

1927 թվականին ընդունված առաջին հնգամյա ծրագիրն աշխարհին տալիս էր բոլշևիկյան առաջնորդի՝ ռեկորդային ժամկետում ամբարտակներ, ֆաբրիկաներ ու ճանապարհներ կառուցելու, անապատները ծաղկող անդաստանների վերածելու վճռականության օրինակ: Արդյունաբերականացման բոլշևիկյան նախագիծը պետք է ոչ միայն

---

1953, in: Zeitschrift für Geschichtswissenschaft 3 (2006), էջ 199-213, **Martin T.,** The Affirmative Action Empire. Nations and Nationalism in the Soviet Union 1923-1939. Ithaca 2001, **Slezkine Y.**, The USSR as a Communal Appartment, or how a Socialist State Promoted Ethnic Particularism, in: Slavic Review, 53 (1994), էջ 414-452:

[8] Տե՛ս **Kotkin S.,** Stalin. Paradoxes of Power 1878-1928. London, 2014, էջ 661-723, **Hughes J.,** Capturing the Russian Peasantry. Stalinist Grain Procurement Policy and the «Ural-Siberian Method», in: *Slavic Review* 53 (1994), էջ 76-103:

[9] Տե՛ս **Stalin J.,** *Werke*, Bd. 13. Berlin (Ost), 1955, էջ 35-36:

արդիականացներ տնտեսությունն ու ենթակառուցվածքները, այլև փոխեր սոցիալական քարտեզը: Նախկին էլիտաները պետք է իշխանազրկվեին, գյուղացիները վերածվեին բանվորների: Ուրալի Մագնիտոգորսկում և ստալինյան արդյունաբերականացման այլ վայրերում ոչ միայն սանձվում էր վայրի բնությունը, այլև կերտվում նոր մարդը՝ շնորհիվ համատեղ զգացումների և արտադրական սխրանքների. գյուղացիներից պետք է ստեղծեին նոր մարդիկ ու քաղաքական առաջնորդներ: Մեկ գիշերվա ընթացքում պետք էր հասնել նրան, ինչին հասնելու համար Արևմուտքի երկրներից տարիներ էին պահանջվել: Բայց կյանքը Մագնիտոգորսկում կարճ էր ու վատ, ամբարտակը կառուցելուց հետո վերստին պետք է քանդվեր: Սակայն կարևորը դա չէր: «Մագնիտոգորսկի ամբարտակը,- գրել է պրոպագանդիստներից մեկը, - դպրոց էր, որտեղ մարդիկ սովորեցին հարգել բոլշևիկյան հրաշքները»[10]: Հրաշքների դեմ փաստարկները չէին կարող ճիշտ լինել: Բայց ով հանդգնում էր բողոքել անպայմանության գաղափարախոսության դեմ, խաղում էր իր կյանքի հետ: 1934 թվականի աշնանը, ծանր արդյունաբերության ժողկոմ Սերգո Օրջոնիկիձեն ձեռնարկությունների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ իր ելույթում հայտարարում է, որ չի լսելու քննադատողներին ու կասկածողներին, որ քննադատությունն ու կասկածանքը համատեղ գործի նկատմամբ դավաճանություն են: Բոլշևիկները գրոհում էին ցանկացած ամրոց՝ երկաթյա կամքով ու կարգապահությամբ: «Ի՞նչն է նրանց խոչընդոտում: Վատ աշխատանքը»[11]:

Թվում էր, թե աշխարհը կերտելու, կառավարելու և պլանավորելու բոլշևիկյան հավատը սարեր էր շուռ տալիս: Թվում էր, թե շուկայի անարխիան, աղքատությունն ու գործազրկությունը մեկընդմիշտ հաղթահարված են: Դրան հավատում էին ոչ միայն բոլշևիկյան առաջնորդները, այլև պրոլետար ու գեղջուկ հաջողակները, որոնք սոցիալիստական մարդացման նախագիծն ըմբռնում էին որպես իրենց կյանքի պատեհություն: Անգամ Եվրոպայում և ԱՄՆ-ում աճում էր հրամանների վրա հիմնված տնտեսության խորհրդային մոդելի գրավչությունը, քանի որ քսանական թվականների վերջին կապիտալիստական տնտեսակարգի արմատական ճգնաժամի պայմաններում կային բազմաթիվ պատճառներ, որոնք խոսում էին կապիտալիզմի մոդելի և ազատական ժողովրդավարության դեմ: 1932 թվականին Խորհրդային Միություն արտագաղթած ամերիկացի բանվոր Ջեյմս Սքոտը հետագայում հիշում էր այն խանդավառությունը, որ ունեցել են ինքն ու իր նմանները խորհրդային այդ նախագծի գաղափարից: «Թվում էր, թե Ամերիկայում ինչ-որ բան սխալ էր: Սկսեցի շատ կարդալ Խորհրդային Միության

---

[10] **Kotkin S.,** Magnetic Mountain. Stalinism as a Civilization. Berkeley, 1995, S. 92, **Scott J.,** Behind the Urals. An American Worker in Russia's City of Steel. Bloomington/Ind., 1989 (erstmals 1942 erschienen), S. 173.

[11] Հղումն ըստ՝ **Gregory P., Markevich A.,** Creating Soviet History. The House that Stalin built, in: Slavic Review 61 (2002), էջ 798-799:

մասին և հետզհետե հանգեցի այն կարծիքին, որ բոլշևիկները տվել էին այն հարցերի պատասխանները, որոնք ամերիկացիները միմյանց էին տալիս: Որոշեցի մեկնել Ռուսաստան աշխատելու, ուսումնառելու և օգնելու կառուցել այնպիսի հասարակություն, որն ամերիկյան հասարակությունից, այնուամենայնիվ, մի քայլ առաջ էր թվում»[12]:

Այն ժամանակ Խորհրդային Միություն մեկնում էին ոչ միայն կոմունիստներ, այլև բուրժուական ճարտարագետներ, ճարտարապետներ և արհեստավորներ՝ մաս դառնալու կամքի այն մեծ լարման, որի շնորհիվ պետք է վերակառուցվեր մի ամբողջ երկիր: Առ իշխանություն կամքը, պլանավորումը և գիգանտոմանիան վարակիչ հիացմունք էին առաջացնում ճգնաժամ ապրող Եվրոպայում: Դրանք ոգևորում էին ոչ միայն կոմունիստներին, այլև պահպանողականներին ու ֆաշիստներին: Բոլշևիկներն անողոքաբար վերացնում էին հինը՝ և իհարկե, առ իշխանություն կամքով: Նրանք արեցին անդառնալին ու անփոփոխելին, և թվում էր, թե ոչ ոք չէր կարող խոչընդոտել նրանց անելու այն, ինչ պետք է անեին: Իշխանություն ունեցողները նախկինում դեռ երբեք չէին արհամարհել բոլոր դիմադրություններն ու հայտարարել, որ աշխարհը քանդելու են և իրենց պատկերացումների համաձայն բերելու են նոր կարգի: «Բայց Լենինիզմի այն տեսանկյունները՝ Լենինի վոլյունտարիզմը և պատմության ընթացքն արագացնելու նրա վճռականությունը, - գրում է Թոնի Ջադթը, - որոնք ավանդական մարքսիստներին ամենից շատ էին շփոթեցնում, հատկապես գրավիչ էին ֆաշիստների համար: Խորհրդային պետությունը բիրտ էր և կառավարվում էր երկաթյա ձեռքով: Սկզբնական շրջանում մարմնավորում էր այն ամենը, ինչը հետագայում հիացնում էր ֆաշիստներին և պակասում էր իրենց սեփական հասարակության քաղաքական մշակույթում: Խորհրդային Միությունն ապացուցել էր, որ մի կուսակցությունը կարող էր հեղափոխություն կատարել, գրավել և անհրաժեշտության դեպքում ուժով պահել իշխանությունը պետությունում»[13]: Թվում էր, թե խորհրդային սոցիալիզմը արդիականության մարտահրավերների բուն պատասխանն էր:

## Պատերազմ և խաղաղություն

XX դարը ուժի կիրառության, ցեղասպանության, էթնիկական զտումների և պատերազմի դար էր: 1914-1953 թթ. Խորհրդային Միությունում միլիոնավոր մարդիկ զոհ գնացին պատերազմին, ահաբեկչությանը, սովին ու համաճարակներին: Եվրոպայի ոչ մի երկիր նոր կարգի նախագծի համար չի վճարել արյան ավելի բարձր գին, քան Խորհրդա-

---

[12] **Scott J.,** նշվ. աշխ., էջ 3, **Schivelbusch W.,** Entfernte Verwandtschaft. Faschismus, Nationalsozialismus, New Deal 1933-1939. München, 2005, S. 16-17.

[13] **Judt T., Snyder T.,** Nachdenken über das 20. Jahrhundert. München, 2010, S. 174, **Mick C.,** Sowjetische Propaganda, Fünfjahrplan und deutsche Rußlandpolitik 1928-1932. Stuttgart,1995.

յին Միությունը: Քաղաքացիական պատերազմի ավարտին Ռուսաստանի ենթակառուցվածքները քայքայված էին, քաղաքներն ու գյուղերը՝ ավերված, միլիոնավոր մարդիկ գաղթել էին կամ ահաբեկված էին, նախկին էլիտան վտարված էր երկրից: Բոլշևիկները հաղթել էին, որովհետև անխղճորեն և անողոքաբար կիրառել էին ուժ: Արդեն իսկ քաղաքացիական պատերազմի տարիներին նրանք պատանդներ էին վերցրել, ըմբոստ գյուղերը՝ հրի ճարակ դարձրել, իսկ իրենց հակառակորդներին բանտարկել համակենտրոնացման ճամբարներում: 1921 թվականին կարմիրբանակայինները Տամբովում թունավոր գազ էին կիրառել ապստամբած գյուղացիների դեմ, Ղրիմում տասնյակ հազարավոր մարդկանց գնդակահարել: Լենինը և իր կողմնակիցները գործի մարդիկ էին, որոնք ոչ միայն խոսում էին նոր կարգերի մասին, այլև դրանք, հակառակ դիմադրությանը, անողոքաբար իրականացնում էին: Հեղափոխությանը հաջորդած առաջին իսկ տարիներին արդեն հոգևորականներին և ազնվականներին հետապնդում ու սպանում էին, բանվորական գործադուլներն ու զինվորական ապստամբությունները՝ բիրտ ուժով ճնշում: Երբ 1920 թվականի գարնանը Տուլայի զինագործարանների բանվորներն ընդվզեցին թշվառ կենսապայմանների դեմ, Լենինը հրամայեց ուժով ճնշել բողոքը: Հազարավոր բանվորներ գնդակահարվեցին կամ նետվեցին համակենտրոնացման ճամբարներ: Մեկ տարի անց Կրոնշտադտի նավաստիները՝ հեղափոխության զինվորական ավանգարդը, ըմբոստացան ընդդեմ բոլշևիկների: Տրոցկու հրամանով խռովությունն արյան մեջ խեղդվեց[14]:

Բոլշևիզմն անճանաչելիության աստիճան փոխեց Խորհրդային Միությունը, տիրազուրկ հողերը վերափոխեց արդյունաբերական անդաստանների, գյուղերը՝ քաղաքների, իսկ մարզերը՝ ազգային հանրապետությունների՝ առաջխաղացման հեռանկար տալով ստորին խավերի միլիոնավոր մարդկանց: Բայց այն վտարեց երկրից նաև էլիտան, իսկ դիմադրությունը ճնշեց երկաթյա ձեռքով: Ուժի կիրառման պետական մենաշնորհը շրջվեց քաղաքացիների դեմ, որոնց պետք է պաշտպաներ: Առաջին անգամ էր, որ որևէ կառավարություն իր գերիշխող իշխանական գործիքները կիրառեց սեփական բնակչությանը ահուսարսափի մատնելու համար: Բոլշևիկներն աշխարհին ցույց տվեցին, թե իրենք ինչի էին ընդունակ, և թե ինչ տեխնիկական հնարավորություններ էին

---

[14] Տե՛ս **Aves J.,** Workers Against Lenin: Labour Protest and the Bolshevik Dictatorship. London, 1996, էջ 39-56, **Karsch S.,** Die bolschewistische Machtergreifung im Gouvernement Voronež (*1917-1919).* Stuttgart, 2006, էջ 214-222, **Avrich P.,** Kronstadt 1921. Princeton, 1970, **Булдаков В. П.,** Красная смута: природа и последствия революционного насилия. М., 2010, էջ 555-587, **Schnell F.,** Räume des Schreckens. Gewalt und Gruppenmilitanz in der Ukraine 1905-1930. Hamburg, 2012, **Nachtigal R.,** Krasnyj desant: Das Gefecht an der Mius-Bucht. Ein unbeachtetes Kapitel der deutschen Besetzung Südrußlands 1918, in: Jahrbücher für Geschichte Osteuropas 53 (2005), էջ 221-246:

բացվում պետության համար[15]: Ավելի քան երկու միլիոն գյուղացի 1930-ական թվականների սկզբին զրկվեց սեփականությունից և աքսորվեց Սիբիր: Գնդակահարվեցին ազնվականներ, քահանաներ ու կուլակներ, էթնիկ փոքրամասնություններ վտարվեցին իրենց հայրենիքից: Միայն 1937 և 1938 թվականների Մեծ տեռորի ժամանակ 680000 մարդ սպանվեց ըստ քվոտաների, միլիոնավոր գյուղացիներ սովի մատնվեցին, և տասնյակ հազարավոր կոմունիստներ մահվան դատապարտվեցին, որովհետև նրանց մեղադրում էին լրտեսության ու դավաճանության մեջ:

Իշխանության ստալինյան տեխնիկան հիմնվում էր ճգնաժամեր բեմականացնելու վրա: Ընդհանրապես, միայն քաոսն ու անարխիան, անորոշությունն ու անվստահությունն էին Ստալինին հնարավորություն տալիս համոզելու իր կողմնակիցներին ուժ կիրառելու կուրսի իրավացիության մեջ: Միշտ էլ բոլշևիկները հաջողության են հասել ուժի սպառնալիքով ու կիրառմամբ՝ հեղափոխության ժամանակ, քաղաքացիական պատերազմի և վերևից ստալինյան հեղափոխության տարիներին: Բայց բոլշևիկյան առաջնորդների շրջանում ուժի կիրառության վերաբերյալ կային նաև տարբեր մոտեցումներ: Լև Կամենևը, Նիկոլայ Բուխարինը կամ Անատոլի Լունաչարսկին խղճի խայթ են զգացել յուրայինների դեմ ուժ կիրառելուց և գուցեն պատրաստ են եղել փոխզիջումների քաղաքական հակառակորդների հետ: Բայց գյուղացիներին ճնշելու հարցում իրենք էլ այլընտրանք չէին տեսնում, որովհետև հասկացել էին, թե որքան էին վտանգված կոմունիստական պետության հիմքերը: Բուխարինը գուցեն սխալ է համարել գյուղատնտեսության կոլեկտիվացումը, բայց ուժի կիրառման պետական մենաշնորհի բռնի իրականացման դեմ ինքն էլ առարկություններ չի ունեցել: Ամեն դեպքում, գյուղացիների դիմադրությունը կոտրված էր, դրա համար ոչ մի գին չէր կարող չափից շատ բարձր լինել[16]:

Բայց իշխանությունը, որը ստիպված է վկայակոչել իրեն, թույլ է: Այդ պատճառով ստալինյան ուժի գործադրումը ոչ թե հզորության նշան էր, այլ թուլության դրսևորում: Այլապես ինչո՞ւ պետք է Ստալինն ու իր համախոհները ոչնչացնեին կոմունիստական վերնախավին, եթե ոչ վերահսկողության կորստի և իշխանազրկության երկյուղից: Բայց այդկերպ բոլշևիկյան փորձարարությունը դարձավ բռնակալություն, դաստիարակման պահպանողական դիկտատուրա, որն ստրկացրեց բանվորներին ու գյուղացիներին և հարկադրված էր սեփական թուլությունը փոխհատուցել ահուսարսափով: Նոր, գեղեցիկ աշխարհի նախագիծը խորհրդային պայմաններում վերածվեց բռնության այնպի-

---

[15] Տե՛ս **Baberowski J.,** Räume der Gewalt. Frankfurt am Main, 2015, էջ 70, **Popitz H.,** Phänomene der Macht. Tübingen, 1992, էջ 74-75:

[16] Տե՛ս **Daniels R. V.,** Das Gewissen der Revolution. Kommunistische Opposition in Sowjetrußland. Köln, 1962, **Cohen S.,** Bukharin and the Russian Revolution. A Political Biography 1888-1938. London, 1974:

սի խրախճանքի, ինչպիսին աշխարհը դեռ չէր տեսել[17]:

Ինչ էլ որ բոլշևիկները մտադրվում էին, կարողանում էին անել, որովհետև այլևս չկային կառույցներ, որոնք կարողանային խոչընդոտել նրանց անխուսափելիի իրագործումը: Հեղափոխությունն իրենից հետո թողեց մի չգրված տախտակ, որի վրա ամեն բան հնարավոր էր թվում գրել և հնարավոր եղավ: Ընդհանրապես, միայն բոլշևիկները տվեցին աշխարհին բոլոր արժեքների ու կարգերի հեղաշրջման պատկերացում և ապացուցեցին, որ թուլությունը հնարավոր է փոխհատուցել երկաթյա կամքով, իսկ կարգը՝ բռնությամբ: Կարմիր տեռորը, գրում էր Տրոցկին, ոչնչացնում է բուրժուազիային և արագացնում պատմության ընթացքը, այն անհրաժեշտ գործիքն է անխուսափելիի իրագործման համար[18]:

Եվրոպայի արևմուտքում տեռորն առաջացնում էր ոչ միայն հիացմունք, այլև վախ: Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո արյունոտ բռնությունների մասին լուրը հասնում է նաև Եվրոպայի արևմուտք՝ 1918 թվականի նոյեմբերին Ուկրաինայից իրենց նահանջի ժամանակ ճակատների միջև հայտնված գերմանացի զինվորների, մերձբալթյան հանրապետություններում բոլշևիկների դեմ կռված սպա կամավորականների և Բեռլին, Պրահա ու Փարիզ փախած սպիտակ էմիգրանտների միջոցով: 1919 թվականի հունվարին սպարտակցիների ապստամբությունը և նույն տարվա ապրիլին Բավարական Խորհրդային Հանրապետությունը հեղափոխությունը տեղափոխեցին Գերմանիա, և դրանով տարածվեց նաև բոլշևիկյան ֆուրիայի հանդեպ վախը, որը վարակիչ դարձավ ֆաշիստական ու ժողովրդական շարժումների համար, որոնց կողմնակիցներն ու ընտրողները երկյուղում էին անօրինությունից ու քաոսից[19] : Բոլշևիզմի հանդեպ վախն ասես արդարացնում էր բռնարարքները, և եթե այդ վախը չլիներ, ապա ֆաշիստական շարժումները ստիպված էին լինելու հորինել այն. կարմիր տեռորը դրանով իսկ օգնեց նրանց ընդունելություն գտնելու սարսափածների շրջանում: Հիտլերի ու նրա կողմնակիցների՝ կոմունիստական վտանգին չափ ու սահման չճանաչող բռնությամբ դիմակայելու և հակառակորդին իր իսկ զենքով ջախջախելու վճռականությունը կասկածի տեղիք չէր տալիս: Ֆաշիզմը հեղափոխություն էր ընդդեմ այն հեղափոխության, որն անհնար է մտածել առանց բոլշևիզմի օրինակի: Ա-

---

[17] Տե՛ս **Baberowski J.,** Verbrannte Erde. Stalins Herrschaft der Gewalt. München 2012, էջ 212-368, **Teichmann C.,** Macht der Unordnung. Stalins Herrschaft in Zentralasien 1920-1950. Hamburg, 2016, էջ 254:

[18] Տե՛ս **Enzo T.,** Im Bann der Gewalt. Der europäische Bürgerkrieg 1914-1945. München, 2008, էջ 115:

[19] Տե՛ս **Eschenburg T.,** Also hören Sie mal zu. Geschichte und Geschichten. Berlin, 1995, էջ 111-120, **Klemperer V.,** Man möchte immer weinen und lachen in einem. Revolutionstagebuch 1919. Berlin, 2015, էջ 85-193: Օ. Շտենգլերը 1918 թ. դեկտեմբերի 18-ի նամակով դժգոհում էր, որ Բավարիայում հեղափոխությունը տապալեց կարգը, բայց դա նաև հնարավորություն ընձեռեց հակահեղափոխությունն օրինականացնելու (տե՛ս **Schmolze G.** (Hg.), Revolution und Räterepublik in München 1918/19 in Augenzeugenberichten. München,1978, էջ 155-156):

ռանց ռուսական քաղաքացիական պատերազմի սարսափների, առանց բոլշևիկների բռնությունների և Եվրոպայում ազատական կարգի ճգնաժամի չէր լինի ֆաշիզմ և նացիոնալ-սոցիալիզմ[20]:

Սոցիալիզմն իր բոլշևիկյան տարբերակով Եվրոպա եկավ ոչ թե հեղափոխության, այլ նվաճման միջոցով: Եվ այնտեղ ընկալվեց ոչ թե որպես ավետում, այլ որպես ավտորիտար, անողոք ու բռնակալական կարգ, որը միլիոնների արյան մեջ խեղդել էր ազատության երազանքը: Հիտլերի և Ստալինի միջև կնքված պակտից հետո Լեհաստանի և մերձբալթյան երկրների օկուպացիան, թշնամական խմբերի տեղահանությունն ու Երկրորդ աշխարհամարտի ռազմաճակատներում միլիոնավոր զոհերը միայն նացիոնալ-սոցիալիստների ձեռքի գործը չէին: Վերջիններս առանց ճգնաժամերն ուժային ճանապարհով հաղթահարելու, սոցիալական կարգերը ոչնչացնելու և իրավունքից զուրկ ասպարեզ ստեղծելու խորհրդային պրակտիկայի ընդհանրապես անհասկանալի են: Ոմանք կարծես մոռացել են, որ Հիտլերն ու Ստալինը համատեղ են սկսել մեծ պատերազմը, երբ պայմանավորվում էին իրար մեջ բաժանել Լեհաստանը: Տարածքների սահմանազծումը, ավելորդ համարվող մարդկանց վտարումն ու սպանությունը, զոհերի խարանադրոշմումը, այս ամենը Խորհրդային Միությունում արդեն առօրյա պրակտիկա էին, նախքան նացիոնալ-սոցիալիստները կսկսեին իրագործել ոչնչացման իրենց գործը: Երբ Հիտլերի բանակները 1941 թվականի հունիսին անցան Խորհրդային Միության սահմանը, հայտնվեցին այրված հողում, որտեղ գտան այն, ինչ իրենց հարկավոր էր ոչընչացման գործն իրականացնելու համար: Ստալինը նախապատրաստել էր այն հողը, որի վրա նացիոնալ-սոցիալիստների մահվան ջոկատները կարող էին գործել ըստ ցանկության: Բոլշևիկներն ու նացիոնալ-սոցիալիստները իրար չէին զարմացնում, բայց վախենում էին: Ամեն մեկն անում էր այն, ինչ մյուսից սպասելի էր[21]:

Երկրորդ համաշխարհային պատերազմը ոչնչացման ուժի այս ներկայացման վերջին գործողությունն էր, որտեղ մարդկանց սպանում էին, որովհետև նրանք չէին կարող լինել այն կարգի մասը, որը տիրակալները համարում էին բոլոր աշխարհներից լավագույնը: Այդ ուժի

---

[20] Տե՛ս **Nolte E.,** Die Krise des liberalen Systems und die faschistischen Bewegungen. München, 1968, էջ 14 –15, **Nolte E.,** *Der Europäische Bürgerkrieg 1917-1945.* Nationalsozialismus und Bolschewismus. Frankfurt am Main, 1987, էջ 17-18, **Wirsching A.,** Vom Weltkrieg zum Bürgerkrieg? Politischer Extremismus in Deutschland und Frankreich 1918-1933/39. Berlin, Paris, München, 1999, էջ 513-522, **Enzo T.**, նշվ. աշխ., էջ 59-65, 265, **O'Sullivan D.,** Furcht und Faszination. Deutsche und britische Russlandbilder 1921-1933. Köln, 1996, **Merz K.-U.,** Das Schreckbild. Deutschland und der Bolschewismus 1917-1921. Berlin, 1995:

[21] Տե՛ս **Baberowski J.,** Totale Herrschaft im staatsfernen Raum. Stalinismus und Nationalsozialismus im Vergleich, in: Zeitschrift für Geschichtswissenschaft 57 (2009), էջ 1013-1028, **Snyder T.,** Bloodlands. Europe between Hitler and Stalin, London 2010; Jan T. Gross, Revolution from Abroad. The Soviet Conquest of Poland's Western Ukraine and Western Belorussia. Princeton/N.J. 2002, էջ 187-224:

ծագման վայրը Խորհրդային Միությունն էր: Ժամանակակից էին պատկերացումները, մինչդեռ կարգի բերելու և ոչնչացնելու պրակտիկան ժամանակակից չէր: Այն իրականանում էր բուրժուական կենսաշխարհից հեռու՝ ավերակված ու ամայացած տարածքներում, որտեղ ամեն մտածելի բան նաև հնարավոր էր, և որտեղ բռնակալությունը կարող էր ըստ ցանկության տարածել ահուսարսափ: Նացիոնալ-սոցիալիստներն այնտեղ տեղափոխեցին նաև իրենց մահվան ծրագիրը[22]: Բոլշևիկյան զանգվածային տեռորի պրակտիկան ոչ միայն նախորդել էր նացիոնալ-սոցիալիստների ոչնչացման բռնությանը, այլև դրա արդարացում և օրինակ էր, միաժամանակ ցույց էր տալիս այն վայրը, որտեղ կարող էր իրագործվել զանգվածային սպանությունը: Հանս-Ուլրիխ Վեհլերը երկու տարի առաջ «Շպիգել» հանդեսում հայտարարել էր, որ 1986 թվականին պատմաբանների բանավեճում ինքը հաղթել է և հաղթել է ինչպես միշտ: Հայացք գցելով Եվրոպայում բռնության կիրառման պատմությանը(XX դարում), անշուշտ պետք է ասել, որ Վեհլերը պարտվել է[23]:

XX դարն իր երկրորդ կեսով նաև խաղաղության դար էր՝ չնայած Սառը պատերազմին և ծանր ստվերի պես եվրոպական աշխարհամասի վրա կախված ատոմային վտանգին: Խորհրդային Միությունում ապրող մարդկանց համար ստալինյան բռնատիրության վերջը շրջադարձային փուլ էր, վերածնունդ: Երեսուն տարի շարունակ պատերազմ էր եղել, տեռոր ու չընդհատվող բռնություն: Իսկ հիմա ամեն բան պետք է փոխվեր: Առաջնորդներն ավարտեցին մահվան հետ խաղը, նրանք միմյանց այլևս չէին սպանում, հրաժարվեցին տեռորից ու բռնակալական կամայականությունից: Այն ամենից հետո, ինչ հպատակները կրել էին գերմանական զավթիչների դեմ պատերազում, ռեժիմի համար այլևս չկար սեփական բնակչության հավատարմությանը կասկածելու պատճառ: Ռեժիմը խաղաղություն կնքեց գյուղացիների հետ և հրաժարվեց այն պատկերացումից, թե սոցիալիզմի խնդիրը վերջնական կարգեր ու նոր մարդիկ ստեղծելն է և դիմակայողին ոչնչացնելը[24]:

Ռուսական կենսազգացման մաս է կազմում այն բանի իմացությունը, գրել է Քերսթին Հոլմը 2014 թ. մայիսին «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե» թերթում, որ «պետությունն սկզբունքորեն իր քաղաքացիների թշնամին է», որի վրա հնարավոր չէ ազդել, և որն անխուսափելի չարիք

---

[22]Տե՛ս **Snyder T.,** Black Earth. Der Holocaust und warum er sich wiederholen kann. München, 2015:

[23] Տե՛ս Der Wandel der Vergangenheit, in: Der Spiegel № 7, 10. Februar 2014, էջ 112-117:

[24] Տե՛ս **Taubman W.,** Khrushchev. The Man and his Era. New York, 2003, էջ 270-324, **Baberowski J.,** Wege aus der Gewalt. Nikita Chruschtschow und die Entstalinisierung 1953-1964, in: **U. Bielefeld, H. Bude, B. Greiner** (Hrsg.), Gesellschaft - Gewalt – Vertrauen. Hamburg, 2012, էջ 401-437:

է, «ինչպես եղանակը, որին պետք է համակերպվել»[25]: Բայց կարելի էր նրա հետ համաձայնության գալ: Քանզի միանշանակության նախագիծը զոհաբերվել էր բարեկեցիկ պետության և կայունության զոհասեղանին, հրամանների վրա հիմնված ստալինյան տնտեսությունը վերածվել էր իներտ պլանային տնտեսության, որտեղ անկախատեսելի ոչ մի բան այլևս տեղի չէր ունենում[26]: Կարելի է ասել նաև, որ խորհրդային պետության ձևավորումը հասել էր իր ավարտին, և իշխող դասը կարող էր վստահ լինել իր իշխանության հարցում: Զորավորը կարող է հանգիստ քնել միայն այն դեպքում, երբ ինքնին տեղի է ունենում այն, ինչ յուրաքանչյուրից ակնկալվում է: Իներցիան ուժի նշան է, որովհետև իշխող դասը կարող է վստահ լինել, որ հպատակներն անում են այն, ինչ իրենցից պահանջվում է: Խորհրդային Միությունը վերածվել էր ազգերի կայսրության, որը ղեկավարվում ու կառավարվում էր ազգային էլիտաների կողմից, այն վերածվել էր կոնսենսուսի վրա հիմնված պահպանողական դիկտատուրայի, որը կարող էր հրաժարվել ուժից ու տեռորից, որովհետև հավատարմությունն այլևս ընդհանրապես կախված չէր սոցիալական կարգավիճակից ու քաղաքական դավանանքից[27]:

Բնակչության բարեկեցությունը միակ մասշտաբն էր, որով դեռ չափվում էր կուսակցության ղեկավարության օրինակարգությունը: Խորհրդային Միության քաղաքացիների մեծամասնության համար անցած դարի 60-70-ական թվականները գեղեցիկ ժամանակներ էին այն ամենից հետո, ինչ մինչ այդ կատարվել էր: Ուտոպիան անհետացել էր, նրան փոխարինել էին հարատև ժամանակը, Հայրենական մեծ պատերազմի և փառապանծ կայսրության միֆը:

## Ժառանգությունը

Ի՞նչ է մնացել մեծ ուտոպիայից ու մեծ նախագծերից: Ոչինչ, գրեթե ոչինչ: Մնացել են ազգությունները՝ որպես իմպերիայի կառուցվածքային սկզբունք, կոմունիստական կուսակցությունը և ընտանեկան միություններն ու կլանները, որոնք Խորհրդային Միության նախկին հանրապետություններում մինչ օրս տնօրինում են քաղաքական ճակատագրերը: Պահպանողական իշխանության այդ համակարգն Արևվելյան Եվրոպա եկավ մի ժամանակ, երբ տեռորի շոկային ալիքներն արդեն թուլացել էին: Խորհրդային Միությունն այլևս համաշխարհային հեղափոխության կենտրոնը չէր և այլևս հեղափոխություն չէր ուզում ընդհանրապես: Բայց ուզում էր անդորր ու կայունություն: Ամեն բան

[25] **Holm K.,** Rußlands Doppeldenker. Die Verwilderung der Heimat, in: Frankfurter Allgemeine Zeitung, 04. 05. 2014.

[26] Տե՛ս **Kotz D., Weir F.,** Revolution from Above. The Demise of the Soviet System. New York, 2007, էջ 70-91, 155-192:

[27] Տե՛ս **Suny R. G.,** The Revenge of the Past. Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union. Stanford/Cal., 1993, էջ 113-126:

պետք է մնար այնպես, ինչպես կար: Շրջադարձն ու փոփոխությունը բացասաբար էին ընկալվում, խորհրդային կայսրությունը պատկերացվում էր որպես «հավերժական»[28]: Հետամնաց բազմազգ կայսրությունը պահելու համար ստեղծված խորապես պահպանողական սոցիալական կարգից զատ՝ Կրեմլն ուրիշ ոչինչ այլևս չէր արտահանում Արևելյան Եվրոպա: Միայն այդ կերպ կարող էր սովետական սոցիալիզմը որպես ներկրված օտար ապրանք հիմնավորվել Կենտրոնական Եվրոպայի արևելյան մասի երկրներում: Անգամ Խորհրդային Միության ներխուժումն Աֆղանստան հանուն հեղափոխական էքսպանսիայի չէր: Դա ընդամենը Խորհրդային Միության ասիական ծայրամասերում տիրող պայմանները կայունացնելու անհաջող փորձ էր: 1970-ական թվականներին այլևս ոչ ոք չէր հավատում սոցիալիզմի ավետումներին: Եվ երբ տասը տարի հետո նաև Խորհրդային Միությունում հարցականի տակ դրվեց այն ամենը, ինչին կոմունիստները երբևէ հավատացել էին, Կրեմլի համար այլևս չկային Կենտրոնական Եվրոպայի արևելյան հատվածում իր գերիշխանությունից կառչելու հիմնավոր պատճառներ: Գորբաչովը չհրաժարվեց սոսկ այն բանից, ինչ ինքն ու իր խորհրդականներն արդեն տնտեսական բեռ էին համարում: Առանց խորհրդային օկուպացիոն զորքերի ռազմական ներկայության և կարգավորիչ ձեռքի Արևելյան բլոկի երկրներում խաղաղ իշխանափոխություն չէր լինի: Խորհրդային Միությունը եվրոպական իրականություն մուտք էր գործել որպես ուժային նախագիծ: Այն հեռացավ բեմից որպես խաղաղարար: Հետադարձ հայացք նետելիս այլևս գրեթե անհնար է հասկանալ, թե Եվրոպայի արևմուտքի և ԱՄՆ-ի էլիտաներն ինչու էին վախենում Կրեմլի ծերունիներից[29]:

«Ես վախենում եմ ազատությունից. հանկարծ հարբած մեկը կգա ու կայրի իմ ամառանոցը»[30]: Այսպես էր գրող Սվետլանա Ալեքսեևիչին ասում իր մոսկովյան ծանոթներից մեկը, որը դժգոհում էր Գորբաչովի բարեփոխումներից: Խորհրդային Միության վերջը բնավ էլ ժողովրդավարության ու բազմակարծության սկիզբը չէր: Ներկայումս հնից ավելի շատ բան է պահպանվել, քան ոմանք կարծում են: Խորհրդային սոցիալիզմի պահպանողական խառնվածքը խիտ ցանցի պես փռված է եղել Կենտրոնական Եվրոպայի արևելյան մասի բոլոր երկրների վրա և հետք է թողել միլիոնավոր մարդկանց գիտակցության վրա: Ինչ ոմանք համարում են միջպատերազմական շրջանի պահպանողական մտածողության վերադարձ, իրականում խորհրդային կարգերի ժառանգութ-

---

[28] Տե՛ս **Yurchak A.,** Everything Was Forever, Until It Was No More. The Last Soviet Generation. Princeton, 2006, **Kotkin S.,** Armageddon Averted. The Soviet Collapse 1970-2000. Oxford, 2008, էջ 1-30:

[29] Տե՛ս **Brown A.,** Der Gorbatschow-Faktor. Wandel einer Weltmacht. Frankfurt am Main, 1996, էջ 156-219, 349-412:

[30] **Alexijewitsch S.,** Secondhand-Zeit. Leben auf den Trümmern des Sozialismus. Berlin, 2013, S. 31.

յունն է: Խոսելով կայսրության, ազգի, ժողովրդի և կրոնի մասին՝ մարդիկ հասկանում են այն «հավերժական» ժամանակը, որը ձև էր շնորհում խորհրդային աշխարհի կյանքի ռիթմին: Իրականում խորհրդային ժառանգությունն ամենուրեք ներկա է՝ ոչ թե որպես ուտոպիա կամ պայծառ ապագայի խոստում, այլ ավտորիտարի դրսևորում: Այս տեսանկյունից XX դարն իսկապես խորհրդային դար էր:

**Բանալի բառեր** – *բոլշևիզմ, հասարակության կարգ, ժառանգություն, ուտոպիա, կոմունիստ, մարքսիստ, Խորհրդային Միություն*

**ЙОРГ БАБЕРОВСКИ** – ***Большевизм как проект порядка***. – В статье рассматривается ряд особенностей большевизма. XX век стал этапом иллюзорного установления порядка. Большевики полагали, что окружающий мир – это просто воля и понимание, поэтому его можно так или иначе менять или регулировать. Понимая его как вызов и пытаясь подчинить своей воле, они утверждали, что такое возможно, если есть необходимые для этого инструменты. Без присутствия советских оккупационных войск и регулирующей роли Варшавского блока в Восточной Европе не произошло бы мирной смены власти. Советский Союз вошёл в европейскую реальность в качестве силового проекта, но сошёл со сцены в качестве миротворца.

**Ключевые слова**: *большевизм, общественный порядок, наследие, утопия, коммунист, марксист, Советский Союз*

**JÖRG BABEROWSKI – *Bolshevism as an Order Project.* –** A number of features of Bolshevism are considered in the article. Taking into account the fact that the 20th century was the stage of the illusion of the realization of order. Accordingly, the world is just a will and understanding, and therefore it can somehow be regulated or changed. Realizing the surrounding world as a challenge and trying to subordinate their will, people realize their destiny. Now they know that any order is possible, if it was ever thought, and if there are tools that can be transferred to the world. Without a military presence of the Soviet occupation forces and the regulating role of the Eastern bloc, there would be no peaceful change of power. The Soviet Union entered the European reality as a power project but withdrew from the scene as a peacemaker.

**Key words**: *bolshevism, public order, heritage, utopia, communist, marxist, Soviet Union*